ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Հայաստանի Հանրապետության Վանաձոր–Ստեփանավան ճանապարհը Բազումի լեռները հաղթահարում էր ծովի մակարդակից 2038մ բարձրությամբ Պուշկինի լեռնանցքով (այսօր լեռնանցքի փոխարեն ճանապարհը անցնում է Բազումի լեռներում կառուցված թունելով):

Իսկ ինչու՞ Պուշկինի անունով կոչվեց լեռնանցքը: 1829թ. ռուս մեծ բանաստեղծ Ա.Ս. Պուշկինը դեպի Էրզրում ճանապարհորդելիս այստեղ հանդիպել է մեկ այլ ռուս մեծ գրող և դիվանագետ Ա. Գրիբոեդովի աճյունը Թեհրանից Թիֆլիս տեղափոխող եզնասայլին: Ի հիշատակ այս դիպվածի լեռնանցքի վրա կառուցվել է աղբյուր հուշարձան և լեռնանցքը ստացել է այդ անունը: